179(931). Քիստ լիզող իջևանցի[1]:
(Այսինքն՝ ժլատ):

180(932). Քյանփուրը տըրանց թանրթանփն ընգյնի:
(Այսինքն՝ անհավատ մարդը ընկնի նրանց ազդեցության տակ):

181(933). Քյուսի անել (Քյուսի արած)[2]:

182(934). Քյուցուփ անել:
(Իրար գլխի հավաքված կուչ գալ՝ տաքանալու կամ իրար ապավինելու նպատակով):

183(935). Քոռլուղ տալ:
(Վնասել):

184(936).Օխտը ղաթտանի[3] ա:
(Շատ ծածկամիտ, բազմադեմ մարդ):

185(937).Օցերը կծնեն:
(Մինչև ինչ-որ բան լինի):
(Ասվում է այն դեպքում, երբ ինչ-որ գործ դժվարությամբ է լինում):

ՕՐՀՆԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(938). Աշխարս խաղաղ ըլի,
Տուք էլ բախտավոր զավակնի ըլեք:
Աչկերնուն ցամաք մեծանան:

2(939). Աչկըտ լիս կենա:

3(940). Ապրես:

4(941). Ապրե՛ս, քու նշանածի (ամուսնու) հետ սաղ ըլես:

5(942). Ապրե՛ք, կըռներնուտ կանաչ կենա:

6(943). Աստծու օխնանքը վե կյան, որթի ջան, ծեր վրա:

7(944). Աստծուց քե միար մի հաչողություն ըլի:

8(945). Աստված նրան խելք տա, շնորք տա:

9(946). Աստու տանուռը քեզ համար պանց ըլի:

10(947). Արևըտ ապրի:

11(948). Բախտավոր ըլես:

12(949).Բախտավոր ըլի:
(Ասում են նորածին երեխային օրհնելիս):

13(950).Բալա ջան, բաժակի հընգեր չընլեք, Սընրտանց հընգեր ընլեք:

14(951). Բարով, հազար բարի եք եկել, Կերած-խմածներնիտ էլ անուշ ըլի:

15(952).Բարցը պանրին ըլի:
(Ասում են հիվանդին):

16(953).Զորանաս, զորտիկանաս, Մեջտեղիցըտ կեռտիկանաս[4]:

---

[1] Իջևանցին ձուկն ափսոսում է ուտել, իսկ քիստը անպայման պետք է լիզի:
[2] Իջևանի շրջանում այսպես անվանում են այն մարդկանց, ովքեր պառավի նման կուչ եկած, ուսուլով փորձում են աննկատելի ինչ-որ մեկին հետևել կամ ինչ-որ բան անել:
[3] Այս արտահայտությունն ասվում է անբարոյական կանանց հասցեին: Դարձվածքի իմաստն այն է, որ կինն այնքան անբարո է, որ յոթ բան ունի (ղաթտանի -կանացի սեռական օրգանը) (ծանոթ. բանասացի):

[4] Այս օրհնանքը ասվել է Իջևանում: Այս օրհնանքի իմաստն այն է, որ մարդն այնքան ապրի, զորանա,

17(954).Զորանաս, ճխճխնոտես:

18(955).Էրկանքի պես պտիտ կյա,
Լըվածքի պես շատանա:
(Ասում են նորածին երեխային օրհնելիս)

19(956).Ժառանգներ ունենա:
(Ասում են նորածին երեխային օրհնելիս):

20(957).Ինչ մուրազ տըրել ես, արժանանաս,
Ինչի էրազըմ ես, որ հասնես,
հասնես նրա հետևից:

21(958).Ծեր ծնունդը բախտավոր ըլի:
(Ասում են երեխայի ծնունդի ժամանակ):

22(959).Ծովի ավազի չափ էրեխեք ունենաս,
Երկնքի աստղերի չափ՝ թոռներ:

23(960).Կապը պինդ ըլի:
(Ասում են նորածին երեխային օրհնելիս):

24(961).Հարգանքով ըլես, շնորքով ըլես:

25(962).Հողը վրեն թեթև ըլի:
(Ասում են մահացածի մասին):

26(963).Հորով-մորով ըլի:
(Ասում են երեխայի ծնունդի ժամանակ):

27(964).Հորով-մորով մեծանա:
(Ասում են նորածին երեխային օրհնելիս):

28(965).Մեծանաս, խելքիտ հասնես:

29(966).Մի բախտի, մի թախտի ծերանաս:
(Ասում են ամուսնության ժամանակ):

30(967).Մի պարի նպատակի արժանանաս:

31(968).Մուրազիտ հասնես:

32(969).Նպատակիտ հասնես:

33(970).Սաղ ըլես:

34(971).Սրտերնուն բիթա[1] մեծանան:

35(972).Տուն մտնես, տանը տիր կյաս,
Տյուս կյաս, տըռանը տիր կյաս:
(Ասում են ամուսնության ժամանակ):

36(973).Տուռնե-տուռը մանկ կյաս, քու բախտը ըզբնես:

37(974).Քեզ թող աստված պահի:

38(975).Քեզ հանար մի տուռը պաց ըլի:

39(976).Քու ըրեխին արժանի ըլես:

40(977).Քու հասակին, քեզ համար համապատասխան մի բախտ պաց ըվի:

41(978).Քու մերը քեզանից տասը պիրի:

42(979).Օղորմի քու ծնողաց ոսկորներին:

43(980).Օղորմի քու հորը:

44(981).Օղորմի քու պապերին:

ՓԱՂԱՔՇԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

1(982). Բոյիտ մատաղ:

ծերանա, որ մեջքից կռանա (ծանոթ. բանահավաքի):

[1] Բիթա - մըղկիտ (մղկտոց) չտենան (ծանոթ. բանասացի)

2(983). Իմ ըրեխանցը մատաղ ըլեմ:

3(984). Ղաքիտ մեռնեմ:

4(985). Մատաղ քե:

5(986). Մեռնեմ սըհանց:

6(987). Ոտիտ տակն ընգնեմ:

7(988). Ցավըտ տանեմ:

8(989.) Քու ոտի տակի թոզը տանռնամ:

ԵՐԳՈՒՄՆԵՐ

1(**990**). Ես հացիցն եմ խնդրել, որ...

2(991). Ըրեխանցս արևը:

3(992). էն աստոծը:

4(993). էն խաչը վկա:

5(994).Իմ ախպոր արևը:

6(995).Իմ հորն ը մոր կերեզմանը:

7(996).Հորըս արևը:

8(997).Հորըս կերեզմանը:

9(998).Սուտը մեռնի:

10(**999**).Վա՜յ, ֆուքի:

11(**1000**).Քոռանամ, թե սուտ եմ ասըմ:

ԳԱՂՏՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(**1001**). Այսինչը (Ըռաքելը) չարը դ տարավ:
(Իջևանում հանգուցյալի մահը գուժելիս չեն ասում մեռավ):

2(1002). Ծողնոտի վրա ծնված[1]:

3(1003). Մոլլի խարջը տալ[2]:

ԱՐԳԵԼՔ-ԲԱՆԱՋԵՎ

1(**1004**). Ով որ խոսա՝ խոստոփ անի,
Սկեընկլիրը կորտոփ անի:

2(**1005**). Ով որ խոսա՝ խոստոփ անի,
Կադանի[3] կ...-ը կորտոփ անի[4]:

ԱՆԵՐՔՆԵՐ

1(1006). Ա՛ ազըզամեռ:

2(1007). Ա՛ բեմուրազ:

3(1008). Ա՛ գյուլլեն նրա ոռը մտնի:

---

[1] Վաղ ժամանակներում աղքատ կանայք ծննդաբերում էին ծղոտի վրա, որովհետև հնարավորություն չունեին կտոր գնելու: Հետագայում «ծղոտի վրա ծնված» արտահայտությունը տրվում էր այն նորածինին, որի մայրը ծննդաբերության ժամանակ մահանում էր: Հավանաբար ծղոտի վրա ծննդաբերելը նաև ընչազրկություն էր նշանակում, և այդ հատկանիշը փոխանցվում էր նորածնին, որը զրկվում էր մորից: Ըստ բանասացի՝ այս արտահայտությունը Իջևանում տարածված է եղել, և իր հորեղբոր աղջկան նույնպես կոչել են «ծղնոտի վրա ծնված», որովհետև նրա մայրը ծննդաբերության ժամանակ մահացել է (ծանոթ. բանասաց Ե. Սիմոնյանի):

2 Իջևանում այս այլաբանական արտահայտությամբ երեխային կամ որևէ մեկին առավոտյան հարցնում են՝ «Քյանցիր մոլլի խարջը տըվի՞ր»: Այսինքն՝ ցանկանում են իմանալ երեխան զուգարան գնացել է՞ փորը թեթևացնելու համար, թե՞ ոչ:

[3] Կադան - տղամարդու անուն է (ծանոթ. բանասացի):

[4] Այս բանաձևն ասվում է տըփնուկի (պահմտոցի) կամ այլ խաղի ժամանակ, որպեսզի խաղի մասնակիցները չխոսեն, այլ լռություն պահպանեն; Այս յուրօրինակ տաբու-բանաձևը կարող է ասվել նաև այլ անուններով, այսինքն՝ երկրորդ տողի առաջին բառը կարելի է փոխարինել կենդանիների (էշ, շուն և այլն) և ծանոթ մարդկանց անուններով; Այս բանաձևն ասվում էր նաև քնելուց առաջ, որ երեխաներն անկողնում չխոսեին (ծանոթ. բանահավաքի):